Որոշում N 1/380Լ

23/03/2007

ՀՀ կենտրոնական բանկի ռեպո և հակադարձ ռեպո գործարքների իրականացման ավտոմատացված համակարգի ծրագրային ապահովման աշխատանքում կիրառման ենթակա հաղորդագրությունների վերամշակված նոր էլեկտրոնային ֆորմատների նկարագրությունը հաստատելու վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՐՄԱՏՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասը՝

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Հաստատել ՀՀ կենտրոնական բանկի ռեպո և հակադարձ ռեպո գործարքների իրականացման ավտոմատացված համակարգի ծրագրային ապահովման աշխատանքում կիրառման ենթակա հաղորդագրությունների վերամշակված նոր էլեկտրոնային ֆորմատների նկարագրությունը (կցվում է հավելված 1)
2. Ճանաչել ուժը կորցրած ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2006 թվականի սեպտեմբերի 13-ին ընդունված թիվ 1/848L որոշումը՝ ՀՀ Կենտրոնական բանկի ռեպո և հակադարձ ռեպո գործարքների իրականացման ավտոմատացված համակարգի ծրագրային ապահովման աշխատանքում կիրառվող հաղորդագրությունների ֆորմատների հաստատման վերաբերյալ
3. սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2007 թվականի մայիսի 2-ից:

Նախագահ՝ **Տիգրան Սարգսյան**

Հավելված 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

«ՀՀ կենտրոնական բանկում ռեպո և հակադարձ ռեպո գործարքների իրականացման ավտոմատացված համակարգ»-ի ծրագրային ապահովման աշխատանքում կիրառվող հաղորդագրությունների էլեկտրոնային ֆորմատները

- 2007 -
Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ՀՏ 505 Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի ածուրդի հայտ 3
2. ՀՏ 053 Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի փոխանցումներ կատարելու հանձնարարական 5
3. ՀՏ 512 Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի ածուրդին մասնակցած հայտի պատասխան 8
4. ՀՏ 003 Անդորրագիր ֆայլի մասին 11

ՀՏ 505 Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի աճուրդի հայտ

Այս հաղորդագրությունը ուղարկում է ՀՀ պետական արժեթղթերի առաջնային շուկայի Գործակալը, Դիլերը կամ որևէ առևտրային բանկը[1] ՀՀ կենտրոնական բանկին (Պահառուին) ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի աճուրդին մասնակցելու նպատակով:

Դիտարկվող ֆորմատի շրջանակներում աճուրդի յուրաքանչյուր մասնակից կարող է ներկայացնել 1 հայտ սեփական արժեթղթերով գործարքին մասնակցելու համար ուղարկված հաղորդագրության միջոցով: Աճուրդի հայտը կարող է պարունակել մինչև 30 առաջարկություն, որոնք իրարից պետք է տարանջատվեն տարբեր արժեթղթերի թողարկման համարներով և (կամ) գործարքի տոկոսադրույքի տարբեր արժեքներով:

Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակը	Դաշտի №	Դաշտի անվանումը	Դաշտի ֆորմատը
Պ	20	Գործառնության համար	16x
Պ	12A	Աճուրդի համար	10n
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x
Ա պարբերություն →			
O	35B	Արժեթղթերի նույնացուցիչ	10x
O	35C	Փոխանցվող արժեթղթերի ծավալ	15number
O	37	Առաջարկվող գին	15number
Պ	37A	Տարեկան եկամտաբերություն	9number
—|			

Պ – պարտադիր, O – օժանդակ

- Հայտը ռեպո գործարքի աճուրդին ներկայացնելու դեպքում, այսինքն :23: = REP, «Ա» պարբերության օժանդակ :35B: և :35C: դաշտերի արժեքները ենթակա են պարտադիր գրանցման, իսկ :37: դաշտը ընդհանրապես բացակայում է:
- Հայտը հակադարձ ռեպո գործարքի աճուրդին ներկայացնելու դեպքում, այսինքն :23: = REV, «Ա» պարբերության օժանդակ :37: դաշտի արժեքը ենթակա է պարտադիր գրանցման, իսկ :35B: և :35C: դաշտերը ընդհանրապես բացակայում են:
- Հայտում առկա :35C: կամ :37: օժանդակ յուրաքանչյուր դաշտի արժեքը պետք է կազմի նվազագույնը 1 000 000 դրամ:
- «Տարեկան եկամտաբերություն» դաշտի արժեքը չի կարող լինել բացասական մեծություն՝ :37A: ≥ 0:
- Հաղորդագրության մեջ կրկնվող «Ա» պարբերությունը կարող է հանդես գալ առավելագույնը 30 անգամ:

[1] – Գործակալ կամ Դիլեր չհանդիսացող ՀՀ տարածքում գործող ռեզիդենտ որևէ առևտրային բանկ:

Դաշտերի նկարագրությունը

Դաշտ :20: Գործառնության համար
ֆորմատ 16x
Այս դաշտում նշվում է հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

Դաշտ :12A: Ածուրդի համար
ֆորմատ 10n
Այս դաշտում նշվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից անցկացվող ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի ածուրդի անցկացման հայտարարության բացառիկ (չկրկնվող) համարը:

Դաշտ :23: Լրացուցիչ նույնացուցիչ
ֆորմատ 16x
Այս դաշտում նշվում է ածուրդի միջոցով իրականացման ենթակա գործարքի նույնացուցիչը, որը հիմք է հանդիսանում տվյալ հաղորդագրության համար: Դիտարկվող դաշտում գրանցվում է հետևյալ կոդերից մեկը՝
- REP – ռեպո գործարք
- REV – հակադարձ ռեպո գործարք

Դաշտ :35B: Արժեթղթերի նույնացուցիչ
ֆորմատ 10x
Այս դաշտում նշվում է ածուրդի մասնակցի յուրաքանչյուր առաջարկության մեջ ներառված ՀՀ կենտրոնական բանկին տրամադրման ենթակա արժեթղթերի թողարկման համարը՝ պետական գրանցման համարը, առանց սկզբնական AM 2 նիշերի:

Դաշտ :35C: Փոխանցվող արժեթղթերի ծավալ
ֆորմատ 15number
Այս դաշտում նշվում է յուրաքանչյուր առաջարկության ծավալը՝ արժեթղթերի անվանական արժեքը, ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը պետք է բազմապատիկ լինի տվյալ պարտատոմսերի ձեռք բերման քայլի արժեքին:

Դաշտ :37: Առաջարկվող գին
ֆորմատ 15number

Այս դաշտում նշվում է յուրաքանչյուր առաջարկության գինը՝ տարեկան որոշակի տոկոսադրույքով ՀՀ կենտրոնական բանկին փոխանցման ենթակա դրամական գումարի արժեքը, ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ:

Դաշտ :37A: Տարեկան եկամտաբերություն
ֆորմատ 9number
Այս դաշտում նշվում է գործարքի տոկոսադրույքը, այն է ածուրդի մասնակցի կողմից ստացվող կամ փոխանցվող դրամական գումարի դիմաց համապատասխանաբար վճարման կամ ստացման ենթակա տարեկան եկամտաբերության տոկոսային արժեքը՝ ստորակետից առաջ և հետո առավելագույնը 4 նիշի ճշտությամբ:

ՀՏ 053 Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի փոխանցումներ կատարելու հանձնարարական

Այս հաղորդագրությունը ձևավորում և ուղարկում է ՀՀ կենտրոնական բանկը (Պահառուն) «Գործառնական օր» ծրագրային համակարգին ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի ածուրդին մասնակցած և բավարարված կամ մասնակիորեն բավարարված յուրաքանչյուր ՀՏ 505 հայտի հիման վրա:

Այս հաղորդագրության մեջ ներկայացվում են յուրաքանչյուր հայտում առկա ածուրդի արդյունքում բավարարված և (կամ) մասնակիորեն բավարարված առաջարկությունների համապատասխան փոխանցումները:

Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակը	Դաշտի №	Դաշտի անվանումը	Դաշտի ֆորմատը
Պ	20	Գործառնության համար	16x
Պ	21	Գործառնության հղման համար	16x
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x
Պ	31	Ամսաթիվ	6n
Պ	82	Արժեթղթեր առաքող կամ ստացող	2a5n
Պ	30V	Վճարման ամսաթիվ	6n
Պ	31A	Մարման ամսաթիվ	6n
Պ	37A	Տարեկան եկամտաբերություն	9number
Ա պարբերություն →			
Պ	35B	Արժեթղթերի նույնացուցիչ	10x
Պ	35C	Փոխանցվող արժեթղթերի ծավալ	15number
Պ	37B	Արժեթղթերի ընթացիկ եկամտաբերություն	9number
Պ	37	Առաջարկվող գին	15number
—|			

Պ – պարտադիր գրանցման դաշտ

► Հաղորդագրության մեջ կրկնվող «Ա» պարբերությունը կարող է հանդես գալ առավելագույնը 30 անգամ:

Դաշտերի նկարագրությունը

Դաշտ :20: Գործառնության համար
ֆորմատ 16x

Այս դաշտում նշվում է հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

Դաշտ :21: Գործառնության հղման համարը
ֆորմատ 16x

Այս դաշտում նշվում է այն ՀՏ 505 հաղորդագրության (աճուրդի հայտի) գործառնության համարը՝ :20: դաշտի արժեքը, որը հիմք է հանդիսանում տվյալ հաղորդագրության համար:

Դաշտ :23: Լրացուցիչ նույնացուցիչ
ֆորմատ 16x

Այս դաշտում նշվում է աճուրդի միջոցով իրականացված գործարքի նույնացուցիչը, որտեղ գրանցվում է հետևյալ կոդերից մեկը՝

- REP – ռեպո գործարք
- REV – հակադարձ ռեպո գործարք

Դաշտ :31: Ամսաթիվ
ֆորմատ 6n

Այս դաշտում նշվում է գործարքի կնքման ամսաթիվը, այն է աճուրդի հայտերի ընդունման օրը:

Դաշտ :82: Արժեթղթեր առաքող կամ ստացող
ֆորմատ 2a5n

Այս դաշտի առաջին ենթադաշտում՝ 2a, նշվում է աճուրդի մասնակցի գլխամասի 7 նիշանոց կոդի առաջին 2 նիշերը, այն է գործունեության երկրի անգլերեն հապավումը (ISO code)՝ AM, իսկ երկրորդ ենթադաշտում՝ 5n, գլխամասի կոդի մնացած 5 նիշերը:

Դաշտ :30V: Վճարման ամսաթիվ
ֆորմատ 6n

Այս դաշտում նշվում է գործարքի կատարման օրը, այն է աճուրդի անցկացման ամսաթիվը:

Դաշտ :31A: Մարման ամսաթիվ
ֆորմատ 6n

Այս դաշտում նշվում է իրականացված (կնքված) գործարքի մարման ամսաթիվը:

Դաշտ :37A: Տարեկան եկամտաբերություն
ֆորմատ 9number

Այս դաշտում նշվում է իրականացվող գործարքի տոկոսադրույքը, այն է ստացվող կամ փոխանցվող դրամական գումարի դիմաց համապատասխանաբար վճարման կամ ստացման ենթակա տարեկան եկամտաբերության տոկոսային արժեքը՝ ստորակետից առաջ և հետո առավելագույնը 4 նիշի ճշտությամբ:

Դաշտ :35B: Արժեթղթերի նույնացուցիչ
ֆորմատ 10x

Այս դաշտում նշվում է արժեթղթերի թողարկման համարը, այն է աճուրդի հայտի (ՀՏ 505) յուրաքանչյուր առաջարկության մեջ ներառված՝ բացի չբավարարված առաջարկություններից, արժեթղթերի պետական գրանցման համարը առանց սկզբնական AM 2 նիշերի:

Դաշտ :35C: Փոխանցվող արժեթղթերի ծավալ
ֆորմատ 15number

Այս դաշտում նշվում է աճուրդի հայտի (ՀՏ 505) բավարարված կամ մասնակիորեն բավարարված յուրաքանչյուր առաջարկության ծավալը՝ արժեթղթերի անվանական արժեքը, այն է աճուրդի մասնակցի կողմից կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից փոխանցման կամ մասնակիորեն փոխանցման ենթակա արժեթղթերի որոշակի ծավալը՝ ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը պետք է բազմապատիկ լինի տվյալ պարտատոմսերի ձեռք բերման քայլի արժեքին:

Դաշտ :37B: Արժեթղթերի ընթացիկ եկամտաբերություն
ֆորմատ 9number

Այս դաշտում նշվում է իրականացվող գործարքին ներառված պետական պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համարին համապատասխան արժեթղթերի ընթացիկ եկամտաբերության արժեքը՝ ստորակետից առաջ և հետո առավելագույնը 4 նիշի ճշտությամբ:

Դաշտ :37: Առաջարկվող գին
ֆորմատ 15number

Այս դաշտում նշվում է աճուրդի հայտի (ՀՏ 505) յուրաքանչյուր առաջարկության գինը՝ արժեթղթերի ընթացիկ գինը, այն է «Փոխանցվող արժեթղթերի ծավալ» (:35C:) դաշտի արժեքին համարժեք դրամական հաշվարկված գումարը՝ ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը աճուրդի մասնակիցը ստանում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից կամ տրամադրում է նրան որոշակի տոկոսադրույքով:

ՀՏ 512 Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի աճուրդին մասնակցած հայտի պատասխան

Այս հաղորդագրությունը ուղարկում է ՀՀ կենտրոնական բանկը (Պահառուն) ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի աճուրդի մասնակցին ի պատասխան նրա կողմից ուղարկված հայտին:

Այս հաղորդագրության մեջ ներկայացվում են հայտում առկա աճուրդի արդյունքում բավարարված, մասնակիորեն բավարարված և չբավարարված առաջարկությունները:

Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակը	Դաշտի №	Դաշտի անվանումը	Դաշտի ֆորմատը
Պ	20	Գործառնության համար	16x
Պ	21	Գործառնության հղման համար	16x
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x
Ա պարբերություն →			
Օ	35B	Արժեթղթերի նույնացուցիչ	10x
Պ	35C	Փոխանցվող արժեթղթերի ծավալ	15number
Պ	37	Առաջարկվող գին	15number
Պ	37A	Տարեկան եկամտաբերություն	9number
Պ	23A	Գործարքի կատարման նույնացուցիչ	8x
—|			

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

- Ռեպո գործարքի աճուրդի հայտին պատասխան ներկայացնելու դեպքում՝ :23: = REP, դիտարկվող հաղորդագրության «Ա» պարբերության օժանդակ :35B: դաշտի արժեքը ենթակա է պարտադիր գրանցման, իսկ յուրաքանչյուր չբավարարված առաջարկության համար՝ :23A: = NST, պարտադիր :37: դաշտում գրանցվում է 0 արժեքը:
- Հակադարձ ռեպո գործարքի աճուրդի հայտին պատասխան ներկայացնելու դեպքում՝ :23: = REV, յուրաքանչյուր չբավարարված առաջարկության համար՝ :23A: = NST, դիտարկվող հաղորդագրության «Ա» պարբերության օժանդակ :35B: դաշտը ընդհանրապես բացակայում է, իսկ պարտադիր :35C: դաշտում գրանցվում է 0 արժեքը:
- «Ա» պարբերության մեկից ավել հանդես գալու (կրկնվելու) դեպքում աճուրդի հայտում ներկայացված բոլոր առաջարկությունների պատասխանները տրամադրվում են «Տարեկան եկամտաբերություն»՝ :37A:, կրկնվող դաշտի արժեքների վերևից ներքև նվազման կարգով:
- Հաղորդագրության մեջ կրկնվող «Ա» պարբերությունը կարող է հանդես գալ առավելագույնը 30 անգամ:

Դաշտերի նկարագրությունը

Դաշտ :20: Գործառնության համար
ֆորմատ 16x
Այս դաշտում նշվում է հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

Դաշտ :21: Գործառնության հղման համարը
ֆորմատ 16x

Այս դաշտում նշվում է այն ՀՏ 505 հաղորդագրության (աճուրդի հայտի) գործառնության համարը՝ :20: դաշտի արժեքը, որը հիմք է հանդիսանում տվյալ հաղորդագրության համար:

Դաշտ :23: Լրացուցիչ նույնացուցիչ
ֆորմատ 16x
Այս դաշտում նշվում է աճուրդի միջոցով իրականացված կամ չիրականացված (ամբողջ հայտի մերժման դեպքում) գործարքի նույնացուցիչը, որտեղ գրանցվում է հետևյալ կոդերից մեկը՝

- REP – ռեպո գործարք
- REV – հակադարձ ռեպո գործարք

Դաշտ :35B: Արժեթղթերի նույնացուցիչ
ֆորմատ 10x
Այս դաշտում նշվում է արժեթղթերի թողարկման համարը, այն է աճուրդի հայտի (ՀՏ 505) յուրաքանչյուր առաջարկության մեջ ներառված արժեթղթերի պետական գրանցման համարը առանց սկզբնական AM 2 նիշերի:

Դաշտ :35C: Փոխանցվող արժեթղթերի ծավալ
ֆորմատ 15number

Այս դաշտում նշվում է աճուրդի հայտի (ՀՏ 505) յուրաքանչյուր առաջարկության ծավալը՝ արժեթղթերի անվանական արժեքը, այն է աճուրդի մասնակցի կողմից կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից փոխանցված, մասնակիորեն փոխանցված կամ չփոխանցված արժեթղթերի որոշակի ծավալը՝ ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը պետք է բազմապատիկ լինի տվյալ պարտատոմսերի ձեռք բերման քայլի արժեքին:

Դաշտ :37: Առաջարկվող գին
ֆորմատ 15number

Այս դաշտում նշվում է աճուրդի հայտի (ՀՏ 505) յուրաքանչյուր առաջարկության գինը՝ արժեթղթերի ընթացիկ գինը, այն է «Փոխանցվող արժեթղթերի ծավալ» (:35C:) դաշտի արժեքին համարժեք դրամական հաշվարկված գումարը՝ ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը աճուրդի մասնակիցը ստանում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից կամ տրամադրում է նրան որոշակի տոկոսադրույքով:

Դաշտ :37A: Տարեկան եկամտաբերություն
ֆորմատ 9number

Այս դաշտում նշվում է գործարքի տոկոսադրույքը, այն է ստացվող կամ տրամադրվող դրամական գումարի դիմաց համապատասխանաբար վճարման կամ ստացման ենթակա տարեկան եկամտաբերության տոկոսային արժեքը՝ ստորակետից առաջ և հետո առավելագույնը 4 նիշի ճշտությամբ:

Դաշտ :23A: Գործարքի կատարման նույնացուցիչ
ֆորմատ 8x
Այս դաշտում նշվում է ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի աճուրդին մասնակցած հայտի յուրաքանչյուր առաջարկության կատարման նույնացուցիչը: Դիտարկվող դաշտում գրանցվում է հետևյալ կոդերից մեկը՝

- SAT – բավարարված

- STP – մասնակիորեն բավարարված
- NST – չբավարարված

ՀՏ 003 Անդորրագիր ֆայլի մասին

Հաղորդագրության այս տեսակը օգտագործվում է այն դեպքում, երբ կատարվում է ֆորմատացված ֆայլերի միջոցով տարբեր համակարգերի միջև տեղեկատվության փոխանակում: Հաղորդագրությունը ձևավորվում է ֆայլը ընդունող համակարգի կողմից ուղարկող համակարգին՝ ֆայլի մշակման արդյուքների մասին տեղեկացնելու նպատակով:

Հաղորդագրությունը ունի հետևյալ տեսք՝

{000IM000045.bma300496124506IM000046.bma }, որտեղ՝

Հաղորդագրության տիպը 3n	Այն Ֆայլի անվանումը, որին անդորրագիր է տրամադրվում 12x	Անդորրագրի տրամադրման ամսաթիվ և ժամ 10n		Սխալի կոդը 2n	Սպասվող ֆայլի անվանումը 12x
		6n	4n		
000	IM000045.bma	300496	1245	06	IM000046.bma

Հաղորդագրությունը սկսվում է «{»նիշով և վերջանում«}»նիշով, տվյալները նրանում լրացվում են առանց բացակների:

Ստուգման ընթացքում բացահայտված հնարավոր սխալների ցուցակը և նրանց կոդերը բերված է աղյուսակում:

Կոդ	Կոդի բովանդակությունը	Կարգավիճակ
06	հաղորդագրությունը ընդունված է	ԸՆԴՈՒՆՎԱԾ Է
07	համարակալման սխալ ֆայլի անվան մեջ	ԸՆԴՈՒՆՎԱԾ ՉԷ
08	պաշտպանության սխալ (առկայության դեպքում)	
09	սխալ ֆայլի ընթերցման ժամանակ	
10	անհայտ հաղորդագրության տեսակ	
11	սխալ վերնագրում	
12	սխալ ունիկալ համարում (առկայության դեպքում)	
13	սխալ հաղորդագրությունում	